ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2018-2019 թթ. պետական բյուջեների եկամուտների վերաբերյալ (հունվար-հունիս)

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի եկամուտներ (մլրդ դրամ)



ՀՀ 2018-2019թթ. պետական բյուջեների եկամուտները (մլրդ դրամ)







ՀՀ 2019 թ. պետական բյուջեի հունվար-հունիս ամիսների եկամուտները կազմել են 758.5 մլրդ դրամ, որը կազմում է 2019թ. պետական բյուջեի առաջին կիսամյակի հաստատված ծրագրային ցուցանիշի **109.8%**-ը, կամ **67.4 մլրդ դրամով ավել**: 2019թ. հունվար-հունիսի եկամուտները **152.0** մլրդ դրամով, կամ **25.1%**-ով ավել են քան 2018թ. հունվար-հունիսի եկամուտները:

Հարկային եկամուտները և պետական տուրքերը 2019թ. հունվար-հունիսին կազմել են **713.4** մլրդ դրամ, որը 2019թ. պետական բյուջեի առաջին կիսամյակի հաստատված ծրագրային ցուցանիշի **110.5%**-ն է, կամ **ավել է 67.9 մլրդ** դրամով: 2018թ. հունվար-հունիսի համեմատությամբ հարկային եկամուտները և պետական տուրքերը **ավել են 140.5 մլրդ** դրամով, կամ **24.5%**-ով:

Պաշտոնական դրամաշնորհները 2019թ. հունվար-հունիսին կազմել են 6.7 մլրդ դրամ, որը 2019թ. պետական բյուջեի առաջին կիսամյակի հաստատված ծրագրային ցուցանիշի 37.6%-ն է, կամ պակաս է 3.0 մլրդ դրամով: 2019թ. հունվար-հունիսի պաշտոնական դրամաշնորհները 2018թ. հունվար-հունիսի համեմատությամբ ավել են **3.0** մլրդ դրամով, կամ **81.1%**-ով:

Պետական բյուջեի այլ եկամուտները 2019թ. հունվար-հունիսին կազմել են 38.4 մլրդ դրամ, որը 2019թ. պետական բյուջեի առաջին կիսամյակի հաստատված ծրագրային ցուցանիշի **138.1%**-ն է, կամ **ավել է 8.6 մլրդ** դրամով: Այլ եկամուտները 2018թ. հունվար-հունիսի համեմատությամբ ավել են **8.6** մլրդ դրամով կամ **28.9%**-ով:

Պետական բյուջեի եկամուտները ավելացված արժեքի հարկի գծով 2019թ. հունվար-հունիսին կազմել են 262.2 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-հունիսի համեմատությամբ **ավել է 68.7 մլրդ** դրամով, կամ **35.5%**-ով:

Ակցիզային հարկի գծով եկամուտները 2019թ. հունվար-հունիսին կազմել են 61.0 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-հունիսի համեմատությամբ ավել է **12.2** մլրդ դրամով կամ **25%**-ով: Ընդ որում, հանրապետություն ներմուծվող ենթակացիզային ապրանքների հարկումից եկամուտները կազմել են 20.4 մլրդ դրամ, կամ 2018թ. հունվար-հունիսի համեմատությամբ 0.4 մլրդ դրամով պակաս, իսկ հանրապետությունում արտադրվող ենթակացիզային ապրանքների հարկումից 2019թ. հունվար-հունիսին ստացվել է 40.6 մլրդ դրամ, ինչը 2018թ. համեմատությամբ ավել է **12.6** մլրդ դրամով կամ 45%-ով:

2019 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում շահութահարկի և բնապահպանական ու բնօգտագործման վճարների ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 166.1 մլրդ դրամ և 30.0 մլրդ դրամ, իսկ 2018 թվականին համապատասխանաբար 97.9 և 31.9 մլրդ դրամ: Այսինքն, շահութահարկի գծով եկամուտների ցուցանիշը 2019թ.-ին 2018թ-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ **աճել է 68.2 մլրդ** դրամով, կամ **69.7 %**-ով, իսկ բնապահպանական ու բնօգտագործման վճարների ցուցանիշը նվազել է 1.9 մլրդ դրամով, կամ 6%-ով:

Եկամտային հարկի գծով 2019թ. հունվար-հունիսին արձանագրվել է 233.0 մլրդ դրամի եկամուտ, ինչը 2018թ. հունվար-հունիսի համեմատությամբ **ավել է 64.7 մլրդ** դրամով կամ **38.4%**-ով:

Մաքսատուրքերի գծով եկամուտները 2019թ. հունվար-հունիսին կազմել են 48.0 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-հունիսի համեմատությամբ **աճել է 9.0 մլրդ դրամով** կամ 23.1%-ով:

Շրջանառության հարկի գծով 2019թ. հունվար-հունիսին արձանագրվել է 15.9 մլրդ դրամի եկամուտ՝ 2018թ. հունվար-հունիսի 9.3 մլրդ դրամի դիմաց: **Աճը կազմել է 71.0%**:

Սոցիալական վճարների գծով ևս առկա է որոշակի աճ, 2019թ. հունվար-հունիսին արձանագրվել է 9.4 մլրդ դրամի եկամուտ, 2018թ. հունվար-հունիսի 9.2 մլրդ դրամի դիմաց:

2019թ. հունվար-հունիսին պետական տուրքերի գծով եկամուտները կազմել են 17.2 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-հունիսի համեմատությամբ **ավել է 1.4 մլրդ** դրամով, կամ **8.9%**-ով:

Այլ հարկային եկամուտների գծով 2019թ. հունվար-հունիսին արձանագրվել է 13.9 մլրդ դրամ եկամուտ, ինչը 2018թ. համեմատությամբ պակաս է 0.4 մլրդ դրամով:

2019թ. հունվար-հունիսին արձանագրվել են 19.3 մլրդ դրամի արտաբյուջետային եկամուտներ, ինչը 2018թ. հունվար-հունիսի համեմատությամբ **ավել է 3.8 մլրդ դրամով, կամ 24.5%**-ով:

2019 թվականի հունվար-հունիսին տնտեսավարողների կողմից վճարված գերավճարների վերադարձի և այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցված գումարները կազմել են 136.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա շուրջ 55 մլրդ դրամի դիմաց: